# ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ
# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

1.Թեմայի անվանում, ժամաքանակը
2.Նպատակները
3.Խնդիրները
4.Վերջնարդյունքները
5.Բովանդակությունը

## «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱ ԾՐԱԳԻՐ
## (շաբաթական՝ 1 ժամ, տարեկան 34 ժամ)
## 5-8 դասարաններ

| Զրույց կերպարվեստի ժանրերի մասին (1 ժամ) |
|---|
| **Նպատակը** |
| • Ծանոթացնել կերպարվեստի ժանրերին:<br>• Ձևավորել գեղեցիկը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու, արարելու ցանկությունը և կարողունակությունը:<br>• Զարգացնել երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը և ուշադրությունը: |
| **Խնդիրներ** |

| |
|---|
| • Ընդլայնել սովորողների աշխարհայացքը:<br>• Զարգացնել գեղագիտական և գեղարվեստական կարողունակությունները:<br>• Սովորեցնել համեմատել իրականը երևակայական ստեղծագործության հետ: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Գիտակցի հայկական կերպարվեստի ներդրումը, ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային արվեստում:<br>• Հայտնել կարծիք արվեստի տեսակների մասին: |
| **Բովանդակություն** |
| • Զրույց կերպարվեստի տարբեր ժանրերի մասին (1 ժամ) |

| **Նատյուրմորտի ժանր ( 10 ժամ)** |
|---|
| **Նպատակը** |
| • Նատյուրմորտը հայ և արտասահմանյան նկարիչների ստեղծագործություններում:<br>• Ի՞նչ են պատկերում նատյուրմորտներում:<br>• Ծանոթացնել նկարիչների ստեղծագործություններին; |
| **Խնդիրներ** |
| • Ամրապնդել ստեղծագործական կարողունակությունները:<br>• Զարգացնել նկարում տեսանելի գույնի տարածական փոփոխության փոխանցումը:<br>• Զարգացնել հեռավոր պլանում առարկաների գունային հակադրության թուլացումը: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Կնտրեն ստեգծագործություններ ցուցադրման համար:<br>• Կաշխատեն խմբով ցուցահանդես կազմակերպելու նպատակով: |
| **Բովանդակություն** |
| • Մրգեր բանջարեղեններ (2 ժամ)<br>• Կենցաղային իրեր (2 ժամ)<br>• Ծաղիկներ ծաղկեփնջեր (2 ժամ)<br>• Ծեփակերտում պլաստիրինից (2 ժամ)<br>• Ապլիկացիոն աշխատանք (2 ժամ) |

| Անիմալիստական ժանր (5 ժամ) |
|---|
| **Նպատակը** |
| • Ծանոթացնել նկարիչների նկարած կենդանիների ճեպանկարների հետ:<br>• Բնօրինակից՝ նկարչության գործընթացում զարգացնել տեսողական հիշողությունը: |
| **Խնդիրներ** |
| • Սերմանել հոգատար վերաբերմունք կենդանական աշխարհի նկատմամբ:<br>• Ցուցադրել ստեղծագործությունը ներկայացնելու կարողունակությունները: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Սովորողները կիմանան ընտանի կենդանիների և այլ կենդանիների, նրանց օգտակարության և խնամքի մասին:<br>• Կզարգանա գեղեցիկը տեսնելու, պահպանելու և արարելու ցանկություն և կարողունակություն: |
| **Բովանդակություն** |
| • Կենդանիների ճեպանկարում՝ շուն, կատու, նապաստակ, աքլոր (1 ժամ)<br>• Կենդանիների գունանկար (1 ժամ)<br>• Իմ սիրած կենդանին (1 ժամ)<br>• Իմ սիրած մուլտֆիլմի հերոսը (1 ժամ)<br>• Հեքիաթային թիթեռնիկներ և թռչուններ, թղթադիմակների պատկերում (1 ժամ) |

| Դիցաբանական ժանր (8 ժամ) |
|---|
| **Նպատակը** |
| • Ընթերցել հեքիաթներ, դաստիարակել սեր ժողովրդական հեքիաթների և այլ ազգերի ստեղծագործությունների նկատմամբ:<br>• Ընթերցված ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում: |

| Խնդիրներ |
| --- |
| • Սովորողները կկարողանան մեկնաբանել սեփական աշխատանքները:<br>• Կարծիք կհայտնեն հայ ազգի արվեստագետների ստեղծագործությունների մասին: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Կնտրեն ցուցադրական աշխատանքներ:<br>• Սեփական աշխատանքները կներկայացնեն տեխնոլոգիական նոր մոտեցումներով: |
| **Բովանդակություն** |
| • Պատկերել «Կարմիր գլխարկ» հեքիաթը (2 ժամ)<br>• Պատկերել «Երեք խոզուկներ» հեքիաթը (2 ժամ)<br>• Պատկերել «Անահիտ» հեքիաթը (2 ժամ)<br>• Պատկերել «Ոսկե ձկնիկը» հեքիաթը (2 ժամ) |

| Բնանկար (7 ժամ) |
| --- |
| **Նպատակը** |
| • Դաստիարակել սեր հայրենի երկրի և բնաշխարհի նկատմամբ:<br>• Զգալ բնության և կերպարվեստի ստեղծագործության տրամադրությունը՝ գույների հուզական բովանդակության միջոցով: |
| **Խնդիրներ** |
| • Զարգացնել ստեղծագործական երևակայությունը:<br>• Զարգացնել առարկայի ձևն ու հիմնական գույնը արտահայտելու կարողունակությունները: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Սովորողները կտիրապետեն տարբեր պատկերման նյութերով աշխատելու հնարքներին և տեխնիկաներին:<br>• Կձևավորեն գեղեցիկը տեսնելու և պահպանելու կարողունակությունները: |
| **Բովանդակություն** |
| • Աշնանային բնության պատկերում (2 ժամ)<br>• Ճաղկած ծառեր (2 ժամ)<br>• Ծովի ափին (2 ժամ)<br>• Աստղազարդ երկինք (1 ժամ) |

| **Դիմանկարի ժանր (3 ժամ)** |
| --- |
| **Նպատակը** |
| • Ծանոթացնել դիմանկարի յուրահատկություններին և տեսակներին:<br>• Դիմանկարում պատկերել մարդու բնորոշ դիմագծերը և նմանությունը: |
| **Խնդիրներ** |
| • Ծանոթացնել հայ և արտասահմանյան նկարիչների գեղանկարչական աշխատանքների հետ:<br>• Պատկերացնել նկարի դերը քանդակագործության և ճարտարապետության ոլորտներում: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Կկարողանան ճնավորել դիմագծերի ընդհանրացման և նմանության կարողունակություններ: |
| **Բովանդակություն** |
| • Ընկերոջս դիմանկարը (1 ժամ)<br>• Ինքնադիմանկար (1 ժամ)<br>• Ասպետ կինը (1 ժամ) |